ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԾԵՍԻՆ ՊԱՏԱՐԱԳԻ ԵՎ ՔԱՐՈԶ ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԵՂՈՒՄԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հունվարի 6-ին, Քրիստոսի հրաշափառ և Ս. Ծննդյան տոնը Մայր Աթոռում տոնվեց ավանդական շքով և մեծ հանդիսությամբ։

Ժամը 11-ին նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը, «Հրաշափառ»-ով, եկեղեցական թափորով, հայրապետական ամպհովանու տակ, Վեհարանից առաջնորդվեց Մայր Տաճար, Ս. Ծննդյան զանգակների զվարթ և ավետավոր զողանչների տակ, և Ավագ Սեղանի վրա մատուցեց Ս. Ծննդյան հանդիսավոր պատարագը։ Տաճարը լիքն էր մայրաքաղաքից, շրջաններից, գյուղերից եկած բազմահազար ուխտավոր հավատացյալների բազմությամբ։

Սուրբ պատարագի միջոցին Վեհափառ Հայրապետը Մայր Տաճարի պատմական կամարների տակ, ի լուր բովանդակ հայ հավատացյալ ժողովրդի ավետեց Քրիստոսի հրաշափառ և Ս. Ծննդյան մեծ պատգամը և «Խաչեցուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ. նովիւքն երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի» բնաբանով բացատրեց Ս. Ծննդյան խորհրդի նշանակությունն ու արժեքը բովանդակ քրիստոնեության համար։

Ապա Վեհափառն ասաց.

«Խաչերու երկանքով մարդկային խիղճը երկնքի դռները բախեց։ Եվ երկինքն պատասխանեց երկրին։ Բացվեցան դռներն ողորմության և ծնավ «արեգակն արդարության», ծնավ Հիսուս՝ «կատարումն օրինաց և մարգարէից»։

Ու այդ նուաշքի և լույսի գիշերը նրեշտակները կերգեին «Փա՞ռք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»։ Այս մեծ ավետիսով, տառապող բայց միշտ նուսացյալ մարդկության սրտին մեջ ծարեց վերկարար լույսը «խաղաղության և սիրո» գաղափարին։

Հիսուսի ծնունդով երկինքն և երկիրը հաշտվեցան։

Աստված խոնարհեցավ և մսուրի մեջ ծնավ, որպեսզի մարդը բարձրանա։ Մարմնապես ծնավ Ան, որպեսզի մարդը հոգեպես վերածնի։ Որդին Աստուծո հանեցավ Որդի մարդու դառնալ, որպեսզի մարդը որդի Աստուծո դառնա։ Ահա այս է Քրիստոսի փրկագործության «մեծ և սքանչելի խորհուրդ»-ի առաջին նշանակությունը։

Խաղաղության պատգամով ծնավ Հիսուս։ Խաղաղություն քարոզեց Ան Իր կյանքի ամբողջ ընթացքին։ Եվ խաղաղության ու սիրո կտակը շրթներուն, ավանդեց իր նոգին Գողգոթայի խաչին վրա։

Իրավամբ է, որ մեծ առաքյալը Պողոս կոչեց, թե մեր Աստվածը «ոչ թէ խռովութեան է Աստուած, այլ խաղաղութեան» (Հռոմ., ԺԵ 33):

Աստուծո խոսքը մարդոց ուղղյալ թե՛ Հին և թե՛ Նոր Եկեղեցի, տեսական ու գործնական մրն է այրը և խաղաղության: Պետք է, բլրամեջ «սրտի խաղաղութեան» (Գալ., Դ 6), որպեսզի արժանի դառնանք «սրտի Աստուծոյ» կոչվելու:

Այո՞, սակայն, մարդիկ շատ հաճախ վտակած են իրենց սրտի դռները երկնառաք այս պատգամներուն առաջ և այնքա՜ն ավերներ ու ոնիրներ գործված են պատմության բեմին վրա, այնքա՜ն մարդիկներ և մանավանդ փոքրիկներ անցած են մեր մեղապատ երկրի վրայեն և այնքա՜ն արյուն ու արցունք հոսած են ի զուր և անօգուտ...

Արդյո՞ք պիտի բացվի՛ վերջապես տեսական խաղաղության արշալույսը: Արդյո՞ք, թեև ազատորեն տարածած, պիտի կարենա՛ անհերկյուղ սավառնիլ խաղաղության սպիտակ աղավնին: Արդյո՞ք ժողովուրդներ և անոնց առաջնորդներ պիտի փութա՞ն «պահել զմիաբանութիւն Հոգւոյն յոյժ խաղաղութեան» (Եփես., Դ 3):

Մեր հավատքը այս մասին անխախտ է, և մեր նույսը անշեջ, վասնզի պիտի խոտակվի պատերազմողին աղեղը (Զաքարիա, Թ 10) և ժողովրդոց իշխաններ խաղաղություն բնդեն, և վերակացուներ արդարություն գործոցեն պիտի բլան (Եսայի, Կ 17):

Խաղաղությո՜ւն ձեզ, սիրելի՛ հավատացյալներ, խաղաղությո՜ւն ձեր սրտերուն և ձեր մտածումներուն, խաղաղությո՜ւն ձեր տուներուն և ձեր սեղաններուն, խաղաղությո՜ւն ձեր բարեկամներուն և ձեր բնկերներուն, խաղաղությո՜ւն ձեր գործերուն, ձեր աշխատանքներուն մեջ, խաղաղությո՜ւն մեր Ս. Եկեղեցվույն և մեր ժողովուրդին, խաղաղությո՜ւն մեր Հայրենիքին և համայն աշխարհին, ամեն։